

ԱՆՆԱ ԵՐԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՊՏՀ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՎԱՈՒՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԱՌԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԴԵԻՐԻԿՅԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)¹

ԽՍՀՄ գրողների միության անդամ, արձակագիր, հրապարակախոս Գեուրգ Դեւրիկյանի² ստեղծագործությունների զգալի մասը³ նվիրված է հայ ժողովրդի պատմությանն ու հայ մշակույթի նշանավոր գործիչներին, հայ բանահյուսությանն ու միջնադարյան գրականությանը: Դրանք արժարժույթ են արդիական հնչեղության խնդիրներ եւ տարբեր ազգային հարցեր: Հայրենասիրությամբ է ներծծված նրա ստեղծագործության ամեն դրվագ, իսկ նյութն ազգասիրությունն է՝ անցյալի ու ներկայի հետ տարված զուգահեռներով եւ մերօրյա կյանքի մտահոգություններով:

Ակադ. Ս. Սարինյանը գրում է. «Ամեն մի վերածնունդի բնորոշ գիծն է կորցրած արժեքների վերագտնումը, հանգամանք, որ մարդկանց հայացքն ուղղում է դեպի անցյալը: Հայրենիք, լեզու, կրոն՝ ահա այն արժեքները, որ հայ նորագիշները հայտնաբերում են պատմական անցյալում, որը, հիրավի, ապշեցնում է նրանց մաքառման հերոսական դրվագներով, հանճարի հրաշակերտ ստեղծումներով»⁴:

Գեուրգ Դեւրիկյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում բառապաշարի հարստությամբ, գրաբարյան բազմաթիվ կառույցների, քերականական ձևերի օգտագործմամբ, միջինհայերենյան բառաշեր-

¹* Ստացվել է՝ 10.10.2024, գրախոսվել է՝ 11.11.2024: Էլ. հասցե՝ annajanyerkanyan@mail.ru:

² Տե՛ս Կոնգրեսի գրադարանի կայքը. <https://id.loc.gov/authorities/names/79013281.html>, համտ. «Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան», հատոր առաջին, Եր., 2005:

³ «Խաչապաշտ հող – 1700» խորագրով ակնարկաշարը, նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, մնացել է անավարտ: Հոգեւոր-մշակութային կենտրոններին՝ Սուրբ Էջմիածնին, Մշո Սուրբ Կարապետ վանքին, Զվարթնոցին, Գանձասարին, Դադիվանքին եւ այլ սրբավայրերին նվիրված հոգվածաշարի մի մասը հրատարակվեց Լոս Անջելեսի «Երկինք» գրական-մշակութային ամսագրում: Անտիպ է մնացել նաեւ «Գլաձոր» պիեսը:

⁴ Ս. ՍԱՐԻՆՅԱՆ, Հայոց գրականության երկու դարը, գիրք 2, Եր., 1989, էջ 393:

տերի կիրառմամբ, լեզվի պատկերավորման միջոցների առատ գործածությամբ: Դերիկյանն իր արձակի պատկերավորությունն ստեղծում է տվյալ դարաշրջանը նկարագրող լեզվաոճական միջոցներով ու հնարանքներով: Պատկերավորման գրեթե բոլոր միջոցներն առկա են Դերիկյանի արձակում, որոնց կիրառմամբ հեղինակը նկարագրում է միջնադարյան աշխարհը:

Իր գեղարվեստական պատկերի բաղադրիչ տարրերից է բնանկարը, որը ոճական յուրահատուկ երանգավորման գրասեղանում է: Գրողի ստեղծագործական երեւակայության միջոցով⁵ շատ հաճախ պատկերվում է բնության նկարագրությունը, որը հեղինակի պատմողական խոսքի անբաժանելի մասն է: Բնության նկարագրությունը պատմավեպում նաեւ դառնում է կերպարներին բացահայտող միջոց ու հնարանք:

Բնանկարը բարձր արվեստով է ներկայացվում Դերիկյանի արձակում: Ինչպես օրինակ՝ «Տրդատ ճարտարապետ» պատմավեպն սկսվում է բնության նկարագրությամբ, որտեղ հատկանշական է Արագած լեռան խորհուրդը. «Լեռը մի գիշերում ճերմակել էր: Եւ Տրդատ պատանուն թվում էր՝ լեռն ավելի է ջահելացել, եւ ճերմակը հարսնաքողի է նման: Ու զմայլված նայում էր Արագած լեռանը, որի ձյուններն արեւի շողերից հուրհրում էին, պեծպեծին տալիս, շողշողում, որ ասես նորահարսի դեմքն էր հարսնաքողի տակից շառագույն առնում»⁶:

Հարկ է նշել, որ Դերիկյանի պատմավեպին բնորոշ է բնությունը պատմականացնելը եւ բնության միջավայրում գործողությունների մեկնարկը ներկայացնելը: Թերեւս համեմատելի օրինակ է Րաֆֆու «Սամվելի» սկսվածքը, որը շեշտված պատմականություն է հաղորդում շարադրանքին, ապա հաջորդում է գործողությունների սրենթաց զարգացումը: Նման դեպքերում բնության պատկերավորմանը համահունչ պետք է լինի հաջորդող գործողությունը: «Տրդատ ճարտարապետ» վեպում Դերիկյանը բնության պատկերների նկարագրությամբ ցույց է տալիս մարդկային ստեղծագործության հաղթանակի արտահայտումը եւ բնության անկրկնելի ուժը: Աղթամար–Անի պատմական զուգահեռին կից, ներկայացվում են Մանվել (Մանուել) ճարտարապետ – Տրդատ աղբրսները: Մարդ–բնություն արարչագործությունը կողք կողքի են: Աղթամար կղզու

⁵ Լ. ԵՋԵԿՅԱՆ, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007, էջ 363:

⁶ Գ. ԴԵՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 3:

բնության առեղծվածային եւ անզուգական պատկերները լրացվում են մարդ-հանճարի մտքի թռիչքով՝ Աղթամարի տաճարով: Մի կողմում չքնաղ բնությունն է. «Մայրամուտի արեւը հրդեհել էր ծովը, եւ շուրջը լույս էր համատարած: Դիմացը Արտոս լեռան ձյուններն էին հրդեհվել: Իսկ շուրջը աշնան կանաչ զմրուխտն էր ափին եւ այգիների դեղինը...»⁷, մյուս կողմում՝ տաճարը. «Տրդատն այդպիսի պատկերազարդ տաճար դեռ չէր տեսել: Սրբատաշ որմերը ճարտարապետն օգտագործել էր առավելագույնս՝ աշխարհի արարչագործության օրից մինչեւ իր օրերն ու ապագան պատկերելու համար: Սա մի քարեղեն մատյան էր, որի ամեն մի պատկեր-էջը շատ բան էր հայտնում ու ուսուցանում դիտողին»⁸:

Դիտելի է, որ Գ. Դեւրիկյանն իր արձակում տարեթվերի նույն ընթացքն է օգտագործում մեր հին հեղինակներին բնորոշ ոճավորմամբ՝ յուրաքանչյուր սկսվող նոր տարին ներկայացնելով միջնադարյան մատենագրությունից եկող կայուն լեզվական կաղապարով, ինչպես օրինակ՝ «Տիրոջ 989 թվականի ամառնամուտին ավարտին հասավ պարսպաց շինությունը, եւ պարսպադռներն օժտվեցին մայրագերան ու բեւեռապինդ դարպասներով»⁹:

Ինչպես գիտենք գեղարվեստական պատկերավորման միջոցներից այլաբերությունն ունի բառային դրսեւորում, որի տեսակներից է խորհրդանշանը (սիմվոլ): Վերջինս հենվում է փոխաբերական իմաստի վրա եւ ունի ասեկիքի խորություն: Խորհրդանշանն արտահայտվում է ոչ միայն բառերի, այլեւ գեղարվեստական ամբողջ պատկերի միջոցով: «Սիմվոլն իբրեւ պատկեր միշտ պարունակում է մի ներքին, ավելի խոր իմաստ, որ մենք ընկալում ենք մտքի երեւակայության օգնությամբ»¹⁰, – գրում է էդ. Զրբաշյանը: Պետք է նշենք, որ Դեւրիկյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում խորհրդանշաններն առատ են: «Տրդատ ճարտարապետ» վեպում Արագած լեռը խորհրդանշում է նպատակների իրականացման այն բարձրակետը, որին ձգտում է հասնել Տրդատը: Այս ամենին հաջորդում է գեղարվեստական պատկերավորությամբ նկարագրված հարսանեկան ծիսաշարի ընթացքը, որն իր լրումին է հասնում մինչեւ լույս ձգվող ուրախությամբ, որին էլ հաջորդում է լույսի ու կյանքի հետ կապված եւ

⁷ Գ. ԴԵՒՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 111–112:

⁸ Նույն տեղում, էջ 119:

⁹ Նույն տեղում, էջ 197:

¹⁰ Է. Զ. ԶՐԲԱՇՅԱՆ, Գրականության տեսություն, Եր., 1972, էջ 257:

նախաքրիստոնեական ակունքներից եկող Արեւագալի շարականը: Հարսանեկան խնջույքում հավաքված վանականներին՝ Սիմոն վարդապետին, Մակար հայր սուրբին, հակադրվում է աշխարհիկ կյանքը՝ հարսանիքը՝ իր ազգագրական սովորույթներով, կաքավող աղջիկներով:

Կտրին գնե, թե գնել կարես
Ճորտակ եմ ու չեմ ծանոթագնոչ:
Թուխ ամ, ծոցուտ գին հրամե
Գնեմ զքեզ, թե գնել կարեմ...¹¹:

Միջնադարյան երգի քառատողին անմիջապես հաջորդում է հեղինակի բացատրությունը եւ վերլուծությունը. «Երգում էր ու գովում այն ճորտակ աղջկան, որ սիրու էր կարոտ, եւ այն պատանուն, որ սիրու տեր էր, եւ հեշտ էր գնելու աղջկա սերը»¹²:

Այն միտքը, որ Ավետարանը չի հակասում կենսասիրությանը, որոշակի ձեւով արտահայտվել է միջնադարյան աշխարհայեցողության մեջ՝ որպես գաղափարական հոսանք: Այդ ըմբռնմանը բնորոշ գեղագիտական արտահայտությունն է վեպի սկզբի հարսանեկան տեսարանը, երբ Սիմոն վարդապետը Տրդատին թույլ է տալիս երգել՝ ասելով. «Երգիր, Աստված սեր է, եւ սիրո այս ժամին իրավունք կա երգելու»:

Խորհրդանշական պատկերներից է ճարտարապետի հալածվելը, որը նկարագրվում է Հիսուս Քրիստոսի չարշարանքներին զուգահեռ անցկացվելով. «Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա շարժեալ զգլուխս իւրեանց եւ ասէին. վա՛հ, որ քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս շինէիր. Ապրեցո՛ղ զանձն քո եւ էջ ի խաչէդ»¹³: Հեղինակի պատկերավորմամբ Սուրբ Գրքից հատվածը նաեւ Տրդատին է աղերսակցվում:

«Եւ ասես նայում էր պատկերից Հիսուս Քրիստոս ու հարցնում.

— Իսկ քե՞զ ինչու են հալածում, Տրդատ մահկանացու:

Եւ ի պատասխան Տրդատը շնչաց.

— Ըմբոստ ոգուս համար, Տէ՛ր, քանզի անմեղ տկարին պաշտպան կանգնեցի եւ չգովեցի արքայի արարմունքը դաժան»¹⁴:

Կարելի է ասել, որ վեպի գեղարվեստական չլուսավաճքում ընթերցողը ծանոթանում է նաեւ ազգային-կրոնական այն գիտելիքներին, որ երկար

¹¹ Գ. ԴԵԴԻՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 5:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 214, հմմտ. Մարկ. ԺԵ. 29:

¹⁴ Նույն տեղում, էջ 218–219:

տարիներ արգելքի տակ են եղել: Տարբեր դրվագներում գեղարվեստորեն հնչում է այն հարցադրումը, թե ո՞րն է վանքերի առաքելությունը, ինչի՞ են կոչված նրանք. ամենօրյա աղոթքի՞ միայն, թե՞ նաեւ ժողովրդի ոգու արտահայտիչը հանդիսանալով՝ պետք է ծառայեն որպես մտքի ու լույսի ակունքներ: Վեպի տարբեր հերոսների, հատկապես վանականների երկխոսությունների միջոցով հեղինակը ներկայացնում է թոնդրակյան շարժման իր ըմբռնումը՝ հիմնված պատմիչների հաղորդած տեղեկությունների վրա: Անդրադարձ կա ժամանակի բյուզանդական վեճերին եւ Հայոց Եկեղեցուն ուղղված մեղադրանքներին նաեւ:

Ոճավորման հաջորդ կարեւոր միջոցը միջնադարին բնորոշ սուրբգրային վկայակոչումներն են, որ հնություն շունչ ենք հաղորդում շարադրանքին: Ընդ որում՝ աստվածաշնչային օրինակը համահունչ է շարակարգի տվյալ իրավիճակին եւ ոգուն: Անգամ ստեղծվել է համապատասխանությունների մի շարք, թե համանման իրավիճակներից որում ինչ օրինակ պետք է բերվի: Փորձության ժամանակ ամենատարածվածը փորձության բաժակը հեռացնելու մասին խոսքերն էին, որոնք Հիսուս ասաց Գեթսեմանիի աղոթքի ժամանակ: Նույն ձևով Տրդատն Անիից ստոր ամբաստանությանմբ հեռանալիս է վկայակոչում Գեթսեմանիի աղոթքի խոսքերը. «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս Դու»¹⁵:

Մի այլ տեղ Սողոմոն իմաստունի խոսքերը ներհյուսվում են վեպի ընդհանուր շարադրանքին. «Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է նոյնպէս աւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ»¹⁶: Այս տողերը մեջբերում է հայրենիքից հեռու գտնվող Տրդատ ճարտարապետը, երբ լսում է երկրի բարօրության մասին: Մեկ այլ մեջբերում կա Սուրբ գրքից՝ Հառիճա վանքի վանահորը բնութագրելու համար. «Զգո՛յշ լերուք ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ ի ներքոյն են գայլք յափշտակողք»¹⁷:

Սուրբգրային մյուս վկայակոչումները եւս ոճավորում են Դերիկյանի արձակը.

¹⁵ Նույն տեղում, էջ 220, հմմտ. Մատթ. ԻԶ. 39, Մարկ. ԺԴ. 36, Դուկ. ԻԲ. 42:

¹⁶ Գ. ԴԵՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 343, հմմտ. Սաղմ. ԻԱ. 2:

¹⁷ Գ. ԴԵՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 344, նաեւ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՅԻ, նշ. աշխ., էջ 87, հմմտ. Մատթ. Է. 15:

- «Զիմաստուութիւն եւ զխրատ ամպարիշտք անգոսնեն» (Մատթ. ԻԲ. 29),
- «Տո՛ւք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ»¹⁸ (Մատթ. ԻԲ. 21),
- «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ»¹⁹ (Եւք ԻԱ. 24–25),
- «Նուաղեցան ճշմարտութիւնք յորդուոց ի մարդկանէ: Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում, շրթամբք նենգաւորի սրտէ ի սիրտ խօսեցաւ»²⁰ (Սաղմոս ԺԲ. 2),—Դավիթ մարգարեի խոսքերը:

Շարադրանքին միջնադարյան շունչ հաղորդելուն են ծառայում որպէս-ով սկսվող նախադասությունները՝ կառուցված երկու տարբեր երեւոյթների համեմատությունների վրա, օրինակ՝

- «Որպէս ամառվա տապից նախնաժ հողն է ծառավի անձրեւի կաթիլին, այդպէս էլ Տրդատի միտքն էր անհագորեն կլանում ընթերցածը»²¹: Ընդհանրապէս մեր հին հեղինակների խոհերն ու տողերը առանձնակի շուք ու հմայք են հաղորդում ցանկացած ստեղծագործության: Ներկա պարագային եւս՝ պատկերը, որ Ղազար Փարպեցին (գլ. Զ.) ստեղծել է սուրբ Տրդատ Գ. Թագաւորի հոգեւոր ծառաւը նկարագրելու համար Գեւորգ Դերիկյանի «մտայղացմամբ միահիւսուել է Տրդատ ճարտարապետի դիմաստուերին»²²:

Միջնադարյան պատկերներն ավելի վառ ներկայացնելու համար հեղինակը կարեւորել է հայրենների տեղին օգտագործումը, որի նպատակներից է նաեւ գալիք սերունդներին անցյալի հոգեւոր արժեքները փոխանցելը.

Դու ապրես հորով-մորով,
Հաց նստես յոթն եղբայրով,
Ապրես դու հորով-մորով,
Ու լցվի սրտիկդ արեւով²³:

¹⁸ Գ.ԴԵԴԻՐԻԿՅԱՆ, Տրդատ ճարտարապետ, էջ 203–204:

¹⁹ Նույն տեղում, էջ 326:

²⁰ Նույն տեղում, էջ 62–63:

²¹ Նույն տեղում, էջ 51:

²² «Միջնադարեան հայ արձակի ժանրային համակարգը», Եր., 2015, էջ 96:

²³ Նույն տեղում, էջ 151:

Հեղինակը վեպի պատմական միջավայրն ստեղծում է շատ բնական՝ օգտագործելով միջին հայերենին բնորոշ բառեր եւ արտահայտչամիջոցներ՝ միաժամանակ տալով դրանց բացատրությունը, առած-ասացվածքներ, օրհնանք-մաղթանքներ:

Օրինակ՝ կուղպակ (կրպակ), կնաֆար (մարմար), երբեմնակի, նախնյաց, իմ կողմանե, տարու մեջ, զավակաց, միտ բերել, ձեռնասուն, գուսանաց, ֆանգի, կորուսեց, գխթոր, փութաց, Աշխարհն Հայոց, դեսպանաց, ագուգա, բուռ (1. գաջ, 2. գաջագործ, 3. դաստիարակ), մանկտավագ, փոֆավոր, բամբառակ, մեղսակից, գիշերն ի բուն, իմաստասիրաց, մանկունմ, կարին (ծծումբ), ֆարախունկ, զադիկ (մկնդեղ), կոփիչ, փնդուկ, պողովատիկ (պողպատե), ածպան (այծպան), մառնպան (հացթուխ ու մառնապետ), նավագ, ստրատիոտ (զինվոր), դրոնգարն (1.զինվոր, 2.տորմիղի հրամանատար) եւ այլն: Հեղինակը տողատակերում տալիս է այս բառերի բացատրությունը նպատակադրվելով ընթերցողին ներկայացնել միջնադարյան ժամանակաշրջանը:

Անգամ միջինհայերենյան հատուկ անուններն են ուսուցողական բնույթ հաղորդում վեպին՝ Եղբայրիկ Պատանի, Խնձորիկ, Նազեր Աղջիկ, Գոհարիկ, Շաղիկ, Շնորհիկ, Աստվածատուր, Անանիա, Անդրեաս եւ ուրիշներ: Հեղինակը կատարում է անունների ստուգաբանական վերլուծություն: Ինչպես, օրինակ՝ Գուրգեն (տեղական հնչմամբ հայտնի է նաեւ Կյորիկե անվամբ) եւ այլն:

Հատկանշական է, որ քաղաքները ներկայացվում են՝ ըստ միջնադարյան հայկական անվանումների, եւ տողատակի ծանոթագրություններում տրվում են ռումինական ընդունված ձևերը:

Պատմական նյութի հիման վրա ստեղծված պատմվածքների լեզուն Դերիկյանը հմտորեն համապատասխանեցրել է ներկայացվող ժամանակին եւ միջավայրին՝ օգտագործելով հնաբանություններ, գրաբարյան ձևեր եւ այլն: Քաջատեղյակ լինելով տվյալ շրջանի առօրյային օրինակ՝ զինվորական աստիճանների կամ հանդերձների դեպքում կիրառել է իմաստային համապատասխան խմբերին վերաբերող եզրույթներ ու բառեր,՝ դեսպակ, պեպլոս, ստոլա, տունիկա, տոգա եւ այլն:

Անիին նվիրված դերիկյանական երկու ծավալուն երկերը համեմատելով միջնադարյան նյութին նվիրված պատմվածքների եւ միջնադարից դեպի նոր շրջան անցում կատարող «Վիրավոր կռունկ» վեպի, ինչպես նաեւ խորհրդային տասնամյակներին վերաբերող պատմվածքների հետ,

տեսնում ենք գրական բարձր վարպետությունն ի ցույց դնող հետեւյալ իրողությունը. ոչ միայն յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ բառեր են կիրառված, այլեւ այսօրվա գրական հայերենի շրջանակում Անիին նվիրված գործերում զգում ենք գրաբարյան շունչը համապատասխան դարձվածքներով ու բառաձեւերով: Նույն կերպ ուշ միջնադարին վերաբերող ստեղծագործություններում հիշյալ շրջանի հայ բանաստեղծության ուրույն շունչն է, ուր միջնադարյան քերթությունը հատուկ գծերին ժէ.—ԺԸ. դարերի լեզվին բնորոշ արտահայտչաձեւերով միահյուսվում է պատումի ընտրյալ բառամթերքը: Ժամանակակից պատմվածքներում գտնում ենք 1930–1980 թթ. երեւանյան իրականությունը բնորոշ գրական լեզուն՝ մերօրյա իրականությունը բնորոշ շարադրանքով:

* * *

Գեւորգ Դեւրիկյանի հայրենասիրական ընթացքն արժանավորապես շարունակեցին որդիները: Կրտսերը՝ Տիգրանը, լրագրության եւ տեղեկատվական ոլորտի ներհուն մշակ է, հրապարակախոս, պաշտոնաթող գնդապետ, իսկ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ, հրապարակախոս Վարդանը, լրագրությանից բացի, իրեն դրսեւորեց նաեւ գիտահետազոտական ասպարեզում: Տիգրանի գրական ժառանգության քննությունը թողնելով ապագային՝ հպանցիկ անդրադառնանք բանասիրական գիտությունների դոկտոր (2014), (2001–2009 թթ.) «էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր, (2015–2023 թթ.) Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վ. Դեւրիկյանի հայրենասիրական արձակի մի քանի առանձնահատկություններին՝ «Վարդանանք եւ հայ երիտասարդությունը»²⁴ գրքի օրինակով: Եթե փորձեք սեղմ ներկայացնել գիրքը, պետք է ասենք, որ Վ. Դեւրիկյանը Վարդանանց ազգային-ազատագրական պատերազմը կապում է Հայկի ազատատենչության հետ՝ հասցնելով մինչեւ Արցախի ազատագրում: Եւ բնական է, որ հիշյալ ընդգրկումն ունեցող գիրքը պետք է խարսխվեր Մովսես Խորենացու, Բուզանդարանի, Սեբեոսի եւ Հովհան Մամիկոնյանի երկերի հաղթական եւ ազգասիրական փաստերին, որոնք հեղինակը նորովի ներկայացնելով նոր շունչ է հաղորդում: Գրքում Վ. Դեւրիկյանը շեշտադրում է այն հանգամանքը, որ Վարդանանց կռիվը նաեւ հայոց պետականության եւ

²⁴ Եր., 2008:

հայ ազգային ինքնուրույնության համար էր մղվում: Հեղինակը նաեւ նշում է, որ այն արդիական ու մշտական է հայ ժողովրդի համար եւ կարելու դեր է կատարում հայ հասարակական եւ հոգեւոր-մշակութային կյանքում: Գրքի լեզվաոճական առանձնահատկություններից է Նղիշերի երկի կարեւորագույն դրվագների հատվածական վերաշարադրանքը, որը Վ. Դերիկյանը կատարյալ ներկայացնում է՝ Ավարայրի ճակատամարտի եւ փափկասուն տիկնանց նկարագրերը տալով²⁵: «Վարդանանք եւ Հայոց Եկեղեցին» գլխում Վ. Դերիկյանը ներկայացնում է Վարդանանց եւ Ղեւոնդյանց տոները, որ առանձնակի ժողովրդականություն են վայելում այսօր եւ պետք է սիրված լինեն հավետ՝ հայրենասիրության եւ եկեղեցասիրության օրինակ հանդիսանալով սերունդների համար: Վ. Դերիկյանը հատկաբար նշում է, որ Ավարայրի՝ ի սեր հայրենյաց նահատակված հերոսները դարձան Հայ Եկեղեցու սիրված դեմքեր, եւ նրանց անունները դրոշմվեցին եկեղեցական տոնացույցների, պատմական մատյանների էջերին եւ շնորհակալ հայորդիների սրտերում: Ի թիվս այլ աղբյուրների՝ Վարդան Դերիկյանը պատմական ժամանակաշրջանը նկարագրելու համար նյութեր է ներառել նաեւ Գանձարան ժողովածուներից²⁶, որոնք հատուկ վեհություն են հաղորդում վեպին: Իսկ միջնադարյան մատենագիրներից արվող մեջբերումներին զուգահեռ հեղինակը տալիս է իր բացատրությունը եւ կարելու դիտարկումներ անում հաճախ Գեորգ Դերիկյանի հետ ոճական նմանություններ դրսևորելով: Վերջինս, ինչպես գիտենք, կարելու էր Վարդանանց պաշարը եւ իր «Գոյամարտ» վեպում առանձին հատված է նվիրել սուրբերին: «Վարդանանք եւ հայ երիտասարդությունը» գլխի միակուռ խճապատկերում ներկայացվում է Գրիգոր Տաթևացու դերը հայ երիտասարդության շրջանում հայրենասիրություն սերմանելու գործում: Վ. Դերիկյանը մեծ ոգեւորությամբ է անդրադառնում Գրիգոր Տաթևացու՝ հայ երիտասարդներին ուղղված քարոզների շարքին: Սուրբ գրքից բերված մեջբերումները ոճավորում են ստեղծագործությունը ու եւս մեկ անգամ երիտասարդների կյանքում կարելու կրոնի դերը: Գրաբարյան մեջբերումներն անմիջապես բացատրվում են դերիկյանական խորագրիտությամբ ու վերլուծությամբ՝ ձուլելով գրա-

²⁵ Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, Վարդանանք եւ հայ երիտասարդությունը, Եր., 2008, էջ 25:

²⁶ Նույն տեղում, էջ 56–57: Պետք է նշենք, որ «Մատենագիրք Հայոց» շարքի գանձարանային երկու հատորները լույս են տեսել Վ. Դերիկյանի աշխատասիրությամբ. տես ԺԳ. եւ ԺԴ. հատորները՝ Անթիլիաս–Լիբանան, 2008:

բարն ու աշխարհաբարը, ինչպես հաճախ անում էր Դերիկյան ավագը. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ զինվորները հիմնականում երիտասարդ եւ պատանի են լինում, Վարդանանց համար ասում է, որ նրանք թեեւ «մանուկ էին հասակաւ, այլ ծեր իմաստութեամբ, որ զմահ ի յանձն առին եւ անանց պսակացն արժանաւորեցան»²⁷:

Գրքում հատկապես ուշագրավ են այն հատվածները, որոնցում Վ. Դերիկյանը նկարագրում է Ավարայրի նահատակներին նվիրված տոները, որ հայ ժողովուրդն այսօր եւս նշում է մեծ ոգեւորությամբ:

Եւ Գեւորգ Դերիկյանի, եւ Վարդան Դերիկյանի հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործությունների լեզվաոճական աշխարհը մեկտեղվում է, եւ մենք ականատես ենք լինում հայրենիքն անսահման կարեւորող ու գովերգող երկու ստեղծագործողների գրչի անզուգական պատկերներին:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայրենասիրություն, պատգամ, պատմավեպ, միջնադար, լեզվաոճական պատկերներ, գեղարվեստական պատկեր, բնանկար:

РЕЗЮМЕ

В данной статье рассматриваются лингвостилистические особенности и библейские выражения в патриотических произведениях одного из самобытных представителей нового периода армянской прозы XX века Геворга Девриkyанa и его сына Вардана Девриkyанa. Подчеркивается связь произведений Геворга Девриkyанa и Вардана Девриkyанa с древнеармянским (грабаром) и среднеармянским языком.

В статье рассматриваются стилистические особенности исторического романа, цитаты на древнеармянском и выражения на среднеармянском языках. Из средств художественной выразительности исследуются аллегория и пейзаж, подчеркивается значение характерных для Средневековья отсылок к Библии.

²⁷ Նույն տեղում, էջ 64:

В статье анализируются также характерное для произведений Г. Девриkyан богатство лексики, уместное использование многих древнеармянских слов и грамматических форм, среднеармянских пластов лексики, широкое применение средств языковой выразительности. Предметом рассмотрения является также книга сына Геворга Девриkyан Вардана Девриkyан «Вардананк и армянская молодежь». Подчеркивается сходство и неповторимость пера отца и сына Девриkyанов.

SUMMARY

The paper examines the linguistic and stylistic features and biblical expressions in the patriotic works by Gevorg Devrikyan, one of the outstanding representatives of the new period of 20th-century Armenian prose, as well as his son Vardan Devrikyan. The connection of the works by Gevorg Devrikyan and Vardan Devrikyan with the Ancient Armenian (Grabar) and Middle Armenian languages is emphasized.

The paper touches upon the stylistic features of the historical novel, the quotes in Ancient Armenian and expressions in Middle Armenian. Allegory and landscape are studied as means of literary expression, and the significance of references to the Bible, typical of the Middle Ages, is emphasized here.

The paper also studies the characteristic richness of vocabulary in G. Devrikyan's works, the appropriate use of numerous Ancient Armenian words and grammatical forms, layers of Middle Armenian vocabulary and the abundant use of linguistic expressive means. The significant book by Gevorg Devrikyan's son Vardan Devrikyan "Vardanank and the Armenian Youth" is also a subject of consideration in this paper. The similarity and uniqueness of writing styles of father and son Devrikyan are emphasized.

